

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՈՆԸ

Մայիսի 28-ին՝ կիրակի. «Տօն Կաթուղիկէ Սրբոյ Էջմիածնի»՝ ըստ եկեղեցական օրացույցի։

Համաեկեղեցական մեծ տոնը Մայր Աթոռում նշվում է ավանդական հանդիսությամբ։

Օրվա հանդիսավոր ս. պատարագը մատուցում է ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գեր. տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը։

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է Մայր տաճար։

Տաճարը լիքն է ուխտավորներով ու հավատացյալների հոծ բազմությամբ։

«Հայր մեր»-ի ժամանակ կատարվում է հոգեհանգիստ՝ ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող, լիոնահայ եկեղեցական խորհրդի ատենապետ Կարպիս Ճընգըտրյանի ծնողաց հիշատակին։

Հավարտ ս. պատարագի Իշման ս. սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Մայր Աթոռի տոնի առթիվ, կատարվում է հայրապետական մաղթանք։

Պատարագիչ սրբազանը իր բովանդակալից քարոզի մեջ անդրադառնում է Հայրապետական Աթոռի հաստատման, Հայաստանում առաջին և մայր եկեղեցու՝ ս. Էջմիածնի դիրության պատմական դրվագներին, ըստ Լուսավորչի տեսիլքի, «տեղիս այս եղիցի տուն աղօթից ամենայն հաւատացելոց և Աթոռ քահանայապետութեան» բնաբանով, և սրտագին բարեմաղթություններ է անում Մայր Աթոռ ս. Էջմիածնի անսասանության, նրա Գահակալի կենաց արեշատության, Հայց. առաքելական եկեղեցու պայծառության և հայրենյաց բարօրության և բարգավաճման համար։

Հայրապետական մաղթանքի ավարտին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է գահասրահ, ուր շնորհավորություններ է ընդունում Մայր Աթոռի համազգային տոնի առթիվ։

Լուսարարապետ գեր. տ. Հայկազուն արքեպիսկոպոսը շնորհավորում է Վեհափառ Հայրապետին՝ հանուն Մայր Աթոռի միաբանության, Գերագույն հոգևոր խորհրդի և բոլոր ներկա հավատացյալների։

Արևմտյան Եվրոպայի հայոց հայրապետական պատվիրակ գեր. տ. Սերովբե արքեպիսկոպոսը, սփյուռքի բովանդակ հայության որդիական սերն ու երախտագիտությունը բերելով Հայրապետական Աթոռին և նրա Գահակալին Մայր Աթոռի տոնի առթիվ, միջնորդելով խնդրում է, որ այս-ուրախ առթիվ Հայոց Հայրապետը Իր բարձր ուշադրության և գնահատանքին արժանացնի սփյուռքի

իր հարազատ զավակներից մեկի՝ լիոնահայ եկեղեցական խորհրդի ատենապետ Կարպիս Ճընգըտրյանի եկեղեցանվեր աշխատանքի, Լիոնի հայոց եկեղեցու շինության գործում։

Վեհափառ Հայրապետը խորապես հուզված Մայր Աթոռի տոնի առթիվ արտահայտված շնորհավորական խոսքերից և ստացված շնորհավորական բազում հեռագրերից և գրություններից, օրհնում է ազգն ու եկեղեցին, հայրենիքն ու ժողովրդին՝ մաղթելով պայծառություն եկեղեցիներին, անսասանություն՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնին, բարօրություն՝ հայրենի հողին, խաղաղություն՝ աշխարհին։

Ն. Ս. Օծությունը ընդառաջելով տ. Սերովբե արքեպիսկոպոսի միջնորդությունը, բարեհաճում է ընդհանուր խանդավառության մեջ Կ. Ճընգըտրյանի կուրծքը զարդարել ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանով՝ որպես հայրապետական բարձր գնահատություն, նրա եկեղեցանվեր ծառայության։

Ժամը 3-ին վեհարանի սեղանատանը, Մայր Աթոռի տոնի առթիվ, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Իրեն սեղանակից դարձնել միաբանության, Գերագույն հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմի անդամներին և այլ հրավիրյալների։

Ճաշկերույթի ժամանակ Վեհափառ Հայրապետին և Մայր Աթոռի տոնը շնորհավորում են տ. Հայկազուն, տ. Սերովբե արքեպիսկոպոսները, տ. Ներսես ծ. վարդապետը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը և ուրիշներ։

Որդիական երախտագիտության ջերմ խոսք է ասում նաև Կ. Ճընգըտրյանը՝ հայրապետական բարձր շքանշանով պարգևատրվելու առիթով։

Վեհափառ Հայրապետը գահասրահում ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով զարդարում է Կարպիս Ճընգըտրյանի կուրծքը (մպիս 28)

Ճաշկերույթը, որն անցնում է ջերմ մթնոլորտում, ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Էջմիածինն ի հօրէ» շարականով։